«Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի թիվ 580-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ _____ 2019 թվականի N -Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի

ԹԻՎ 580-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.8-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի «Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանելու մասին» թիվ 580-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2019 թվականի

_____ ____ N ____-Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ

1. Երևան քաղաքում կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման և մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի (բացառությամբ շահումով խաղերի և խաղատների գործունեության) կազմակերպման գործունեության տեսակների մասով արտոնագիր տրամադրելու նպատակովպետականտուրքի հաշվարկ-ման համար լրացուցիչ գործակիցների կիրառման նպատակով հիմք ընդունվող՝ Երևան քաղաքի գոտիները նկարագրվում են հետևյալ կերպ.

Գոտին	Տարածքը
Առաջին	Առաջին գոտու տարածքը սահմանագծվում է Մաշտոցի պողոտայով սկսած՝ Լուսավորչի փողոցի հետ հատումից մինչև Սարյան փողոց, Սարյան և Մոսկո մինչև Մարշալ Բաղրամյան պողոտա, Մարշալ Բաղրամյան պողոտայով մինչ Բաղրամյանի առաջին փակուղի, այնուհետ Իսահակյան փողոցով մինչև Թա Թամանյան փողոցով մինչև Անտառային փողոց, Անտառային փողոցով մինչ այնուհետ՝ Տերյան և Աբովյան փողոցների վերջնամասով՝ ներառյալ Աբովյա փողոցով մինչև Կորյունի փողոց, Կորյունի և Նալբանդյան փողոցներով մինչ հետ հատվելը, Խանջյան, Ագաթանգեղոս, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ փողոցն պողոտա:
Երկրորդ	Երկրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են առաջին գոտու տարա փողոցների հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են Աբովյան պուրակ փողոցով մինչև Կորյունի փողոցի հետ հատվելը, այնուհետ Չարենցի և Նար- Տիգրան Մեծի պողոտայով մինչև Քրիստափորի փողոց, Քրիստափորի փողո Արշակունյաց պողոտան, Կոմիտասի զբոսայգու հյուսիսային սահմանագծով գետը, Հրազդան գետով մինչև Հաղթանակի կամուրջ, այնուհետ Հաղթանակ պողոտայի սկզբնամասով, Սուրբ Սարգիս եկեղեցու շրջակայքով՝ ներառյալ տարածքը, այնուհետ Պարոնյան փողոցով մինչև Ձորափի փողոց, Ձորափի Ուրուգվայի հրապարակ, շրջանցելով Ուրուգվայի հրապարակը՝ կրկին Ձորա Պարոնյան փողոցի հետ հատումը, Պարոնյան և Պռոշյան փողոցներով մինչև հետ հատումը, Այգեձորի փողոցով մինչև Ջեյմս Բրայսի փողոցի հետ հատու փողոցով մինչև Սոսեի փողոցի հետ հատումը, Սոսեի փողոցով մինչև Վաղա այնուհետ Անտառային փողոցով մինչև Թամանյան փողոցի հետ հատվելը:

Այլ	Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ առաջին և երկրորդ գո չընդգրկված տարածք: